

## ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԱՅ

## ԵՒ ՀՐԱՒԷՐ

## ԽՈՒՑԱԳԻՐ-ԽԷՆՆ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՏԱԳԻՐՈՅ.

Ուղարկելով խմբագրութեանդ Բազուայ Մարգարական Ընկերութեան խորհրդոյ մեծապատիւ Անդամոց ինձ գրած նամակը՝ խնդրեմ՝ հրատարակել զայն Արարատ ամսագրոյ մէջ: Ես յիշեալ ընկերութեան վրայ գովեստներ զրելու այստեղ միտք չունիմ. որովհետեւ այդ նամակը ինքնին ցոյց կուտայ ընթերցողաց, թէ նոյն ընկերութիւնը մինչեւ որ աստիճան գործունէութեան ասպարիղի մէջ յառաջ կընթանայ այժմ՝ ըստ կարելոյն: Յիրաւի մեր ազգային թերթերը մի քանի յօդուածներ հրատարակեցին այդ գործունէութեան մասին, բայց նորա ամբողջ շրջանը ոչ մէկու մէջ այնպէս ամփոփուած չտեսնուիր, ինչպէս ներկայ նամակիս մէջ: Յոյս ունիմ որ կարող, բայց ազգասէր անձինք բոլորովին ապահով լինելով ընկերութեան յարատեւութեան վրայ կը յօժարին իւրեանց անգամակցութեամբ՝ նորա առաւել ևս յառաջադիմութեան պատճառ հանդիսանալ:

ԱՆԳՐԷԱՍ ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Է 12 ԺԵՐԷՐԷ

1870 ՄԷ:

ՍՐԲԱԶԱՆ ՀՈՎՈՒԱՊԵՏ.

Պատիւ ունիմք յայտնելու, որ Բազու քաղաքում է 21 մայիսի 1864 ամի բարձրագոյն հրամանաւ Օգոստոսիառ Կայսեր հաստատուած է Մարգարական ընկերութիւն յանուն որոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, և թէ այս ընկերութեան գլխաւոր նպատակն է տարածել լուսաւորութիւն և բարեգործութիւն Ռուսաստանի հպատակ Հայոց մէջ այսինքն ազգաւ Հայերի երկեւ զուակաց, ըստ չափու կարողութեան տալ բարոյական և մտաւարական կրթութիւն, նպատաւաւորաց լինելով նոցա չքաւոր անդամներին զանազան քրիստոնէական թարեգործութիւններով:

Ան այս հիման վերայ ընկերութիւնը իւր եօթնամեայ կացութեան մէջ թելպէտ հանդիպել է զանազան անյալող զիպուածներէ, որք արգելադրեց իշխան իւր ժամանակին ընդհա-

նուր ժողով կազմել համաձայն 16-դ յօդուածոյ իւր կանոնադրութեան, որ ընկերութեան գործերը ուղղութեամբ յառաջ տանուէր, սակայն 1870 տարուայ սկզբում կառավարիք ընկերութեան գործոց տեսնելով որ Բազու գտնուող անգամաց որքանութիւնը լրացած է այնքան թաւով, որով կարելի է ընդհանուր ժողով կազմել, առանձին շրջաբերական նամակներով հրաւիրեցին ի Բազու բոլոր ընկերութեան ինչպէս Բազուայ նմանապէս միւս անդր կովկասեան քաղաքներում գտնուող անգամներին. ուստի է 25 յունվարի նոյն 1870 ամի օրերը զայց ուսումնարանի միջոցով հաշիւում առ ներկայութեամբ ժողովեալ հիմնադիր և անփոփոխ անդամաց, որք ընդամենը քառասուն հոգի էին, կազմուեցաւ ընդհանուր ժողով և այս ժողովում ձայների առ աւելութեամբ ընտրուեցան նոյն ժողովին խորհրդոյ գործքերը կառավարելու համար, երեք տարի ժամանակաւ, հախազա՛ն և 8 անդամք, նշանակելով այս վերջիններից մերը Գանձապետ, իսկ միւսը Աստիճադիր:

Այն արժանաւայիտաւ օրից սկսած, խորհրդոյ նորընտիր անդամք բաց է 40 անփոփոխ անդամներից, որ կարողացան զբոնել Բազու կամ այլ քաղաքներում, յետագայ գործունէութիւններն են ցոյց տուել յօգուտ մեր ազգին:

Նախ, Օրինաւոր ձեռով բարեկարգեցին օրերուցայց ուսումնարանը, ուր ուսանող աղջկեք սովորումն զրել և կարգաւ Հայոց և Ռուսաց լեզուներով, ձեռագործութիւն, երգեցողութիւն և տնտեսական կառավարութեան ձեւերը: Ուսումնարանը այժմ համաձայն ցանկութեան և միջնորդութեան անգամաց գտնուումէ է թիւս հոգեւոր ուսումնարանաց ընդ հովանաւորութեամբ Վեհափառ Կաթողիկոսին մօրոյ:

Երկրորդ. Բացեցին Բազու քաղաքում մի տպարան, որ ունի երկու ընտիր մանուկներ իւր նորածնոյ տառերով Հայոց, Ռուսաց և Թուրքաց. խորհրդոյ անդամք աշխատումն ևս առաւել բարեւթել այս տպարանը, ըստ մեծի մասին այն իսկ նպատակով, որ տպագրուին և բաժանուին կամ ձրի կամ արժան գրքերով բոլոր Ազգային Դպրոցաց և Ուսումնարանաց հարկաւոր ուսանելի դասագրքեր, նմանապէս և այլ ազգագրուտ ուսումնական, պատմական ձեռագիր և հազուադիւտ տպագրուած գրքեր ետեք:

Երրորդ. Առանձին օրագրութեամբ օհմանագրեցին Անդամք, որ շարունակաբար իւրաքանչիւր տարի է 21 մայիսի այսինքն ընկերութեան հաստատութեան օրը, օրհնութիւն և պատարագ մատուցանեն աղթելով և բարեմաղթելով առ Աստուած վասն բարօրութեան և կենաց Օգոստոսիառ Կայսեր և վասն կենաց օրելի անգամաց ընկերութեան բարեկատուութեամբ որոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Նմանապէս Լուսաւորչի Վերապէն էլ օրը, և ընկերութեան հանգուցեալ անգամաց հոգւոյ համար պատարագ մատուցանել:

Չորրորդ. Բացեցին գրատուն և թանգարան ժողովելով նոցա մէջ զանազան ձեռագիր և տպագրած հին և նոր գրքեր և օրագրութիւններ Հայոց, Ռուսաց և այլ Եւրոպական լեզուաց, որոց թիւը առաժմ հասնումէ մինչ 500 հատոր:

Հինգերորդ. Չորս երեսասարգք շարունակումն իւրեանց ուսումը, երկուքը Բազուայ Գիմնազիայում, երրորդը Մոսկուայ և

չորրորդը Պետերբուրգ, ստանալով ընկերութեան գանձարանից նշանակեալ գումարը վասն ապրուստի եւայլն:

Վեցներորդ. Բազուայ ժխական ուսումնարանի ծախսին ընկերութիւնը օգնում է իւրաքանչիւր տարի նշանակեալ գումարը հասուցանելով, որ աղքատ Հայոց դասակները եւ աւաւել յաւաքագէտ գանձին ուսման մէջ եւ բաց ի սրանից նախընտրան չքաւոր ուսանողաց ձրի դասադրքեր:

Եօթներորդ. Ընկերութեան գանձարանից իւրաքանչիւր տարի Զայտնութեան եւ սուրբ Զարութեան օրերում բաժանովումէ Բազուայ այրեաց, տնանկ եւ աղքատ Հայերին սահմանեալ դուստրը. նմանապէս մուսայման տակ չեն մնում եւ այլ աղքի կամ եկաւոր աղքատներ:

Ութներորդ. Շամախայ նորահաստա օրիորդաց ուսումնարանի պահպանութեան միջոցները աւելի յաւաքել կերպով զօրացնելու համար նշանակուած է նմանապէս ամեն մի տարի դրամական գումար ընկերութեան գանձարանից:

Իններորդ. Համաձայն միջնորդական խնդրոյ Անգամոց խորհրդոյ արգէն ստացուել է Նորին Յմութեան Վեհափառ Վաթիկիոսի օրհնաապա լուծումը Բազուայ նորաշէն Մայր եկեղեցւոյ բակում կառուցանել շինութիւններ, որոց մէջը կարողանան տեղաւորվի ծխական եւ օրիորդաց ուսումնարանները, ապարանք, գրատունը, նմանապէս եւ առաջնորդարանը: Շինութեանց հիմնարկութիւնը սկսվել է հրաշափառ Համարաձման օրը եւ պիտի վերջանայ մինչև Նոյեմբեր ամիսը ներկայ տարւոյս:

Այս յիշեալ բաները ընկերութիւնը չհամարելով բաւարարութիւն իւր մտադրած ազգօգուտ նպատակներին, պարտաւորվում է ընդարձակելու համաձայն կանոնադրութեան եւ միւս այլ քաղաքներում Հայոց մէջ իւր դարձունէութիւնը, որոյ մասին ըստ չափաւ իւր կարեաց, շարունակում է քանացողութիւնը ի հարկէ ձեռք առնել յայտնի է որ Հայոց այժմեան դրութիւնը համեմատելով լուսաւոր ազգաց սիրալի գործոց հետ, նման է (կարող ենք ասել) մի վերաւորեալ եւ կիսակենդան հիւանդի, որի բժշկութեան յոյսը եւ ակնկալութիւնը կախուած է մի անքակելի միութեանց եւ կամ մարանական ընկերութիւնից, առանց այս նախանձելի երկնառաք շնորհաց, նորա քանի մի գործունեայ որդւոց յաւաքագիտութիւնները եւ բարոյական շինութիւնները կընթանան կազ ի կազ եւ կմասն միշտ անկատարութեան եւ թերութեանց մէջ:

Մարդասիրական ընկերութեան միմիայն նպատակն է մեր սիրելի ազգի ուսումնակարգութեան որդւոց մէջ տարածել այն լուսաւորութիւնը եւ բարեգործութիւնները սրից այժմ գուրկ է մեր ազգը, եթէ Աստուած կ յաջողէ եւ նորա Նիթական հրաշքները ժամանակին թոյլ կտան խորհրդոյ անգամաց վերաշինել քանի մի բարեգործութիւնները ընկերութեան խորին եւ բազմադարեան ակնկալութեանը նայելով մեր ազգի լրութեան գանձանակի մէջ այլի կնոջ լոմային կնամանի. բաց մի այդ օրինակ ազգօգուտ շինութիւնը եւ մտադրութիւնը կատարելագործելու համար, ընկերութիւնը պէտք է ունենայ ոչ քաղաքներում ազգասէր անձինք, որոց միջնորդութեամբ եւ հետեւութեամբ կարելի լինի բազմացուցանել իւր անդամաց թիւը, որով միմիայն կարող է ունենալ յարատեւութիւն:

Վասն որոյ խորհրդոյ անգամաւ հաստատ տեղեակ լինելով ձեռք քաղցր եւ մարդասէր ընաւորութեան կողմանէ, դիմում են առ Զեղ եւ խոնարհաբար խնդրում են ի փառս եւ ի պատիւ Լուսաւորիչ Հօրն մերոյ աշխատութիւն յանձն առնեք հետեւի գուցէ Աստուծոյ օգնականութեամբ եւ Զեր յորդորանօք կարողանաք դանել քանի մի պատուաւոր, անփոփոխ կամ տարեկան անգամներ, որոց կաշուան եւ հասուցանելի գումարի օրհանութիւնը նշանակուած է ի 12-դ յօդ. կանոնադրութեան, որոյ քանի մի օրինակ սրա հետ հանդերձ վկայագրօք խորհուրդը առաքելով առ Զեղ կրկին խնդրում է նորընտիր անդամաց տնունը եւ պատուանունը գրել վկայագրում նշանակելով եւ ընծայեալ գումարը:

Խորհրդոյ անգամաւ մեծ վստահութեամբ յոյս ունին, որ դուք նոցա այս խնդիրը չեք թողնել անկատար: Հաւատացե՛ք, որ Զեր ամենափութը եւս հետեւողութիւնը եւ աշխատութիւնը այսպիսի բարեգործական աստարիչում մնալու են խորհրդոյ անգամաց սրտերում անմահանալի, եւ իւրաքանչիւր տարի Զեր պատուական անունը նաք կպարտաւորվին հրատարակել մեր ազգային օրագիրներէրց եւ այլ առանձին ապագրութեամբ իւր ազգին հաշուատուութեան մէջ ի լուր եւ ի մխիթարութիւն Հայաստանի ազգասէր որդւոց, որք ի հարկէ ստանալու էք եւ դուք իւր ժամանակին:

Նախագահ խորհրդոյ Մովսէս Զօհրապէանց  
Անգամաւ Խաչատուր Բանեւեանց  
Ներսէս Կրամբեանց  
Գեորգ Լալայեանց  
Գրիգոր Թումանեանց  
Իման Ղաւաթեւ

Առնեալսիր Վառչապէանց

Ի 15 Մայիսի 1871 ամի

Ի Բազու:

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Խաչատուրեան Լրագրոյ Կոմիտէի.

Տարբ. պատասխանի անախատապէս այնքան, որ խօսի անտեղի է և անկշիռ. զի մի երեւեացի յաճճ իւր երրաճէ Իմ քննիչ:

Այս օրերս վերադառնալով Մոսքուայից, տեսայ ապագրուած շարաթաթերթի «Մեղուի» մէջ, համար 25. Յուլիսի 3 - ին, մի յօդուած. Պարոն «Յ. Լ. Ղալաբեկի» ն ստորագրութեամբ մեր հրատարակութեամբ ի ըստ ընծայած երջանկայիշատակ «Դուրի» Բեգին Սիւնեաց Պատմութեան և վերայ, որը կարգաւով մի առ մի տեսայ Պարոնի գրուածքի մէջ, քանի մի սղալ եւ անտեղի քննութիւնք, որով սրբազան պարագ եմ համարում բացատրութեամբ ուղղել, զարմնելով այժմեան իսկ,